

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.
Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏՆՍՈՒՄՆ

Երկու քիւր մեկ ծրարով
Տարեկան 14 Ժր.
Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Ժրար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ

Ծանոցման տողը
20 սանթիմ

ՀԱՍՏԵ

Rédaction du Journal

«Travounk»

VAKNA (in gar e

Редакция

на ВѢСТНИКЪ

«В ВУНК»

ВАРНА

Գրութիւնք իւր չեն
ըրաշիր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Յարգ իրենց բաժնեդէր չը վճարող մեր բաժնետիրներէն կը խնդրուի որ հաճին մաքրել իրենց հաշիւը ներկայ տարւոյ, որուն տասնհորրդ ամսոյն մէջ կը գտնուինք: Այսչափ յայտարարութիւնը համարենք, նկատելով թէ թերթ մը հրատարակելու ծախքերը յապաղում չեն վերցնիր:

ՎԻՃԱԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Պաշտօնական թիւը և որակը տակաւին պաշտօնական կամ ամպաշտօն ունէ վաւերագրով մը չէ ճշդութեամբ փառական խորհրդարաններու մէջ մարդահամարի մի քիչ կանոնաւոր տետր մը չը գտնուելէ զանա, ծխատէր քահանաներն ալ իրենց ծուխերու թիւը և պարագաները պատկերացնող տետրակ մը չունին: Այնպէս որ այսօր չէ կարելի գիտնալ թէ այնինչ հայաբնակ քաղաքին մէջ քանի հայ կայ: Ինչ տարբեր, ինչ արհեստ և ինչ հպատակութիւն և այլն ունին:

Վառնայի թաղ խորհուրդը այս մեծ պակասը լրացնելու բաղձանքով, ասկէ երկու ամիս առաջ, քաղաքիս ազգայնաց վիճակագրութեան գործը յանձնած էր Տէր Աբիսողոմ քհն. Թորոսեանի ջանասիրութեան, որ արդէն նուիրակ հայր սուրբին գալէն առաջ երեք հարիւրէ աւելի ընտանիքներ արձանագրած էր իրենց բոլոր պարագաներովը, և կը շարունակէ արձանագրել:

Բայց կաթող. նուիրակին հոս հասնելը ու պատգամաւորաց ընտրութեան համար ընտրողաց լիակատար ցանկի մը պահանջը վիճակագրութեան գործին նոր մղում մը տուին Ուստի տեղույս թաղ խորհուրդը յանձնարարեց բոլոր Պաշտօնական խորհուրդներուն որ փութով ձեռնարկեն մարդահամարի, որպէսզի կարողանան մինչև հոկտեմբեր ամսոյ վերջը պատրաստել կատարեալ վիճակագրոյցներ, որոնցմէ պիտի քաղուին ընտրողներու

ցանկերը: Առանց այդ վիճակագրութեան կարելի չպիտի ըլլայ ընտրողներու լիակատար ցանկեր ունենալ, և առանց այդ ցանկերուն նոյնպէս կարելի չը պիտի ըլլայ օրինաւոր ընտրութիւն կատարել: Հետեւապէս էական պայման է վիճակագրութեան անթերի կատարումը սաքանի մը շարքում մէջ:

Կը լսենք թէ տեղ տեղ տարակուսանքներ կան պանդուխտները վիճակագրելու մասին: Ըստ մեզ այդ տարակուսանքը աւելորդ է: Վիճակագրութեան միջոցին պանդուխտներն ալ պէտք է արձանագրել, անշուշտ նշանակելով անոնց որչափ ատենէ ի վեր այդտեղը հաստատուած կամ եկած ըլլանք:

Նոյնն է նաև գիւղերը բնակող ազգայիններու համար պէտք է ըսել թէ հարիւրաւորի կը հասնի գիւղաբնակ հայ ընտանիքներու թիւը, անոնց ալ ցուցակը անհրաժեշտօրէն պէտք է ունենան մերձակայ քաղաքին թաղ խորհրդարանը ու ծխատէր քահանան:

Երկրի մը մէջ հասարակութեան մը կատարեալ վիճակագրութեան որ աստիճան կարեւոր ըլլալը հոս բացատրել աւելորդ է: Մի ուրեմն գործի:

ԿՈՉ ՍԸ ԱԶԱՏԱՄԵՐ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ (*)

Թուրքեր

«Թուրք» յարգելի անուն: Այս անունը կուտանք մենք մեր բոլոր հայրենակիցներուն, արաբ, թիւրք քիւրտ, ալպանցի, յոյն, հայ, պուլկար և դեռ ուրիշ ցեղերէ մարդոց որոնք մեզ միացած են: Մենք ապրած ենք 600 տարիներէ ի վեր թիւրք

(*) Թարգմանած ենք Բոս Առաւելիայի վերջին թիւէն: Ծ. Խ.

դրօշին տակ և դեռ պիտի ապրինք: Բայց ապրիլ... Սիրելի հայրենակիցներ, ի՞նչպէս ապրենք և ի՞նչպէս կապրինք:

Մարդուս համար նպատակ պէտք է ըլլայ ազատ ապրիլ: Երբ այս ապրէս է, մեզ դիւրին է նկատել թէ մենք ինչպէս ապրած ենք, մանաւանդ վերջի երեսուն տարիներուն մէջ: Այո, այս երեսուն տարին դժբաղդութեանց յաջորդութիւն մը եղած է: Մենք գողերու և ոճրագործներու ձեռքը յանձնուած ենք: Ու՛ր է ազատութիւնը:

Ու՛ր է մարդկութեան երջանկութիւնը:

Մեր հայրենիքը այլևս յարգելի չէ: Բոլոր կառավարութիւնները, քաղաքակրթ կառավարութիւնները իրենց նպատակ ունին մարդկութեան երջանկութիւնը ապահովել, խաղաղութիւնը պահպանել, արդարութեամբ կառավարել: Բայց մենք թուրքերս չը գիտցուիր ի՞նչու համար դատապարտուած ենք անպիտան և տարրի կառավարութիւն մը ունենալու:

Այս կառավարութիւնը քոյր ցեղեր իրարու խոյլսողել կուտայ: Եւ գոհ չը մնալով զանոնք իրարու թշնամացնելէ, նա վրտանդի կ'ենթարկէ այդ ցեղերու կեանքը և երջանկութիւնը բանտի և աքսորի ենթարկելով: Նա մեր հայրենիքը կը խրամատէ գիտակցաւոր մեքենարուած տանջանքներով: Հայրը վստահ չէ իր զաւկի մասին որդին իր հօրը, եղբայրը իր քրոջը մասին: Երկու բարեկամներ չեն կրնար գլուխ կ'լլու տուած խօսակցիլ: Երեք կամ չորս ընկերներ չեն կրնար հաւաքուիլ:

Վաճառականութիւնը, արհեստագործութիւնը, հողագործութիւնը՝ որոնք բնկերութիւնը ապահովող տարրերն են, ետ մնացած են: Ամեն տեղ բանտ, աքսոր և մահ:

Եւ մեր կողմէն մինչև հիմա ոչ մի ազդակ, ոչ մի ջանք: Ահ, ինչու համար մեզմէ ծածկենք, թէ մենք ետ մնացած ենք, տգէտ

ներ ենք, մենք չենք գիտեր թէ ինչ է ապրիլը, և չենք գիտեր գնահատել թէ կեանքի նպատակը ազատութիւնն է:

Բայց պէտք չէ որ այս տգիտութիւնը շարունակուի, այդ ամենագէշ գերութիւն մը կըլլայ: մենք օտարականներու գերիները կըլլանք:

Ի՞նչ պէտք է ըսել անկէ ազատելու համար: Պէտք է արդարութիւնը վերահաստատել կառավարութեան մէջ:

Բայց բարենորոգիչ անձերը ցրուած լինելով, թշնամի և խառն հսկող կառավարութեան մը գիւղաց գոռար է վերջաւորութեան մը հասնիլ: Ուստի այս պարագային ի՞նչ պէտք է ըսել: Մեզ կը մնայ հետեւիլ Գաթէմուհիի և Էրզրումի օրինակին:

Գաթէմուհիի բնակիչները վրաւորեցին կուսակալ Էնիլը որ իրեն մենավաճառ ըրեր էր քարիւղի ամբողջ վաճառականութիւնը: Անոնք չը վարանեցան իրենց թշուառութեան աղաղակը երկրորդ հասցնելու, Անոնք բացատրեցին ուղղակի իրենց տառապանքը:

Երկրորդ որ ամեն շարեաց աղբիւրն է, մարդկօրէն վարուեցաւ այս միաձայն և սուր աղաղակին ի լուր: Անմիջապէս Էնիլի պաշտօնակալութիւնը ծանուց և խոստացաւ հսկել ժողովուրդի շահերուն ու ապահովութեանը:

Նոյնպէս Էրզրումի բնակիչները վրաւորեցին իրենց կուսակալը: Երկրորդ ինքզինք ստիպուած զրտաւ որ գործը արդարացնէ: Բայց հազիւ կուսակալը ծրարիզոն հասած էր, Պալատը՝ կարծելով թէ ժողովուրդին ըմբոստութիւնը անով մարած վերջացած է, կրկին կուսակալը իր պաշտօնատեղին վերադարձուց: Բայց ասոր վրայ ժողովուրդը ալ աւելի գրգռուեցաւ, և վերջնական կերպով կուսակալը հեռացնել տուաւ:

Ճշմարիտ է որ այս երկու նահանգներու բնակիչները այժմ աւելի հանդարտ և երջանիկ են, նոր կուսակալ մը կը պարտաւորուի զգուշութեամբ վարուիլ այս

տեսակ ժողովուրդի մը հետ. անց-
եալը անոր վարմունքին ուղե-
ցոյցը կըլլայ:

Կեցցե՛ն ուրեմն Գաստէմունի
և Էրզրումի բնակիչները:

Այս երկու գաւառներու ընթաց
քը սքանչելի է, առանց բնաւ
քաղաքական ըլլալու, այլ բոլոր-
ովին համապատասխան ընդհա-
նուրի շահերուն: Ասով հանդերձ
ամեն միջոց նպատակին հասնե-
լու համար մենք ազնիւ կը նկա-
տենք: Կը մաղթենք որ բոլոր
գաւառները նոյն օրինակին հե-
տեւին:

Մենք կը բաղձայինք աղաղա-
կել յառաջիկային. կեցցե՛ն բնա-
կիչները Գոնեայի, Պաղտատի, Իզ-
միրի, Սելանիկի, Պրոսպայի, Կ.
Պոլսոյ, վերջապէս կեցցե՛ն բոլոր
Թիւրքերը:

Թիւրքեր, չը մոռնանք թէ մեր
հայրենիքին ազատութիւնը և
երջանկութիւնը կախում ունի
իսլամ և քրիստոնեայ տարբերու-
միացումէն: Եթէ մինչև ցարդ
մենք տեսնէք կառավարութեան
թշնամի ըլլալը քրիստոնեանե-
րուն, այս անոր համար է որ մին-
չև ցարդ միայն անոնք էին ա-
զատութիւն պահանջողները:

Բայց բերկրութեամբ կը հաս-
տատենք թէ Էրզրումի Թիւրքե-
րը Հայերուն պէս կը մտածեն:

Ամեն լանգամ որ մենք պիտի
չարժինք ազատութեամբ հայերն
ալ մեզ պիտի հետեւին: Թիւրքեր
Քիւրտեր, Հայեր, Արաբ-
ներ, Չէրքէսներ, Ալպանացի-
ներ, Լազեր, Յոյներ, Հրեա-
ներ միանանք ամենքս: Միա-
նանք միենոյն կարծիքի տակ մեր
ազատութեան, մեր շահերուն և
մեր հասարակաց ապահովութեան
համար:

Ոտքի ելլենք ընդ դէմ տէրե-
րու և կուսակալներու որոնք կու-
զեն մեզ ճզմել:

Կեցցե՛ միութիւնը, կեցցե՛ ա-
զատութիւնը:

Ազատական Թիւրքերու
Գործուն Յանձնախումբ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

21

ԱՒԱԶԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

—*—*—

ՃԱՋՂԱՐ-ՊԵՆ

(Շար. նախորդ թիւէն)

Ա՛խ, որքա՛ն բարի էք, ո՛վ Քա-
թի՛ր, ընդհատեց ծանփարպէկ, ևս ա-
ռաջին անգամն է որ միւսիւրման
տովրդի մը բերնէն միմիայն մար-
դասերութիւն ու գեղութիւն կը լսեմ:
Շատեր եկած գացած են... չատե՛ր
կըսեմ, բայց անոնց քարոզներու նիւ-
թը շարունակ ոճիւր ու արիւն եղած է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ 5 հոկտ.

Հակառակ պուլկար կառավա-
րութեան ձեռք առած ազդու
միջոցներուն յայն ժողովուրդի
պաշտպանութեան համար, Յոյ-
ներու մէկ կարեւոր մասը կը նա-
խընտրեն այս երկրէն դուրս ել-
լելով խաղաղ կեանքի մը տիրա-
նալ: Այսպէս յոյն ընտանիքներու
գաղթումը կը շարունակուի:

Մէկ կողմէն «Ռօտօլուպէց»-
ներու Յոյներու ապրանքներուն
դէմ «պօլքօտ» ընելը և միւս կող-
մէ պուլկար կառավարութեան
յոյն վարժարաններու դէմ
ձեռք առած խիստ միջոցները՝
ըստ կրթական օրէնքի 10րդ
յօդուածին, յոյները կը գնեն
երկու ճամբու մէջ տեղ, այսինքն
անոնք պէտք է ընտրեն կամ
Պուլկարիա մնալով պուլկարա-
նալը և կա՛մ գաղթելը:

Մէլնիկ գաւառին մէջ վառ
նիւ (Թիւրքիա) գիւղին պուլ-
կարներուն դէմ թիւրք չէթայի
մը ծայրայեղութիւններ գործած
ըլլալու լուրը առիթ տուաւ կա-
ռավարութեան օւկան եղող «Նօվ-
-վէթ» թերթին դժգոհութիւն
յայտնելու Մուրցատէքի բարե-
նորոգմանց արգիւնքէն: Թերթը
երկար յօդուածի մը մէջ կըսէ
թէ մեծ պետութիւնները պար-
տին վերջապէս աւելի ազդու
միջոցներ ձեռք առնելու հրո-
շում տալ ընդդէմ թիւրք «ռէ-
-ժիմ»ին, և սկսիլ հիմնական վե-
րակազմութիւն մը ընելու օս-
մանեան վարչութեան: Միւսին
ատեն կէս պաշտօնական թերթը
կը յայտարարէ թէ Մակէդոնիոյ
ներկայվիճակին շարունակութիւ-
նը կրնայ միայն պուլկար իշխա-
նապետութեան համբերութիւնը
սպառել և սա պիտի մղուի վեր-
ջապէս ծայրայեղութեան երթա-
լու: Այս սպառնալիքէն անմի-
ջապէս յետոյ յօդուածագիրը

խորհուրդ կուտայ Թիւրքիոյ որ
ինք իր ձեռքովը բարեկարգուի
առանց օտար պետութեանց մի-
ջամտութեան: Ու կըսէ, այս կեր-
պով է որ Թիւրքիա հիմը պիտի
դնէ անկեղծ մերձեցման մը
Թիւրքերու և պուլկարներու մի-
ջև: Այս է «Միակ փրկութիւնը
երկու ազգերուն»:

* *

Լաւատեղեակ շրջանակներու
մէջ կը տարածուի այն շշուկը,
թէ Պուլկարիոյ պարտքերուն
միացման համար 150 միլիոն
Ֆր. փոխառութեան բանակցու-
թիւնը՝ որ վերջին գարնան ընդ-
հատուած էր, պիտի վերսկսի
«Պանգ տը Բաուր և տէ Բէյը-Պա»
գրամատան հետ:

Այս շշուկը տարածողները կը
հաւանին իսկ ըսելու, թէ այս
բանակցութիւնը պուլկար կառա-
վարութեան համար խիստ նպաս-
տաւոր արգիւնք մը տալու ճամ-
բուն մէջ է, և կառավարութիւ-
նը կը ջանայ արդէն լաւ պայ-
մաններ ստանալու համար, միւս
երկիրներու, ինչպէս Սերպիոյ,
փոխառութեանց կնքումէն ա-
ռաջ վերջացնել իր գործը:

ՄԱՍՄԱՐԲ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ (')

«Իրաւունք» թերթի 67 թ. ոյն մէջ,
քիչ մը լրջութիւն վերագրով երկու-
նակ յօդուածի մը տակ, մի ոմն Արդոս
կազմուած հայերի անցեալի ոչ ներ-
կայի հանրային գործիչները եւ յեղա-
փոխական առաջնորդող պետերի գոր-
ծելակերպի տեսակետով:

«Մի այդպիսի անիմաստ» գրութեան
պատասխանել իսկ պաշտօնագիտ
թէ եւ չարժեք իմիջի այլոց, եւ որովհետեւ,
յեղափոխական գաղափարի թաքտեալ
հակառակորդներն ինչպէս եւ ազգային
ներքին թշնամիներն երբեմնի օգտուելով
մասլոյ ազատութիւնից՝ բացազանջում
են գանազան անտեղի ակնարկութիւ-

(') Յանուս անկողնակալութեան
սոյն նամակը առանց տառ մը փոխե-
լու կը հրատարակենք: Դ. ՈՒՐ:

ճանչնայ իր տէրը: Ու անէծքը կը
ծանրանայ միայն չարագործին վրայ:
Գիտցէ՛ք որ Աստուած մարդու խիղճը
կը դիտէ. եւ անոր խորը կը թափանցէ
իր աչքը: Գիտցէ՛ք որ խիղճը գերա-
գոյն ձայն մըն է ու անոր հանդէպ,
մի սուբիւման ըլլա՛ թէ՛ կնաւոր:
միշտ միենոյն է: Դուք կը ցաւիք
կեանքներու վրայ: Ասիկա ձեր կամ-
մէն անկախ թիւադրութիւն մըն է...
ձեր ներքին խառնուածքէն՝ կը բղիթի
դուք չէք կրնար զսպել, ինչ որ ալ
ընէք: Իրաւ է, վերապահելու չափ
զգուշութիւն կրնաք ընել՝ զայն ամե-
նուն չարատայադէմ համար: Սակայն
խղճելու չափ ուժ չունիք որովհետեւ
մարդու ներքին ձայնէն աւելի զօրա-
ւոր բան չը կայ:

Ծանփար պէկ, - յոնիներու այդ աւա-
տական իշխանը, - կը զգար թէ իր դէմ
գտնուողն կը տիրանար իր հոգեւոյն ու
իր սրտին: Կը զգար թէ կը լեցուէր,

նով. եւ իրրեւ ազնիւ յեղափոխականի
ստուերով քողարկուած, ազգային շա-
հախաղաղական տնտեսութեան յեղափոխական
անադարտ յայտնի գործիչներն քննա-
դատելու հաւանաբանութեամբ, արդա-
տակո՛չ քարոզչութեան ցուպ ձեռն
ոստոնտու՛մ են աստ ու անդ որոնելու
տնաւ մտքեր՝ եւ չփոխելու համար ո-
րոշ միտումով մը, թէ իմն մտածելու,
մասամբ դատողութիւն:

Ահա՛ այն շարքից եւ Արդոս, զոր
փորձում է ի զուր՝ հանրային նուիրա-
կան զգացումները վերաւորելու ու
թունաւորելու համար: Որ, իր յօդուա-
ծի նախարանով թէ եւ քիչ մը լրջու-
թիւն՝ սակայն եւ այս, իրրեւ ֆան-
թէզի, (իւր բառով) անմիջապէս երկմ-
տելով հէնց յօդուածի սկզբով ճառուածէ՛
թէ հայերս արդէն տիրացու ժողովուրդ
մըն ենք:

Դժբախտաբար, թոյլերու այն յատ-
կութիւնը՝ Արդոս, մասնաւորաբար փո-
խանակ զիւրային վերապահելու, ճգնու-
մէ փոխանցելով՝ յոյ բոլոր հայերին,
որպէս ի հարկի, առանց ունենալու գո-
նէ մասամբ դատողութիւն:

Յօդուածագիրը, չոյնպէս անցեալ
զարու՝ ազգային կեանքէն ալ՝ իբր քիչ
մը տեղեակ՝ չուտով եւ պարզում է
ներկայիս ընկերավարական գաղափարը-
տեւելորդական՝ զի ընդ որով ազգը կը
պառակտուի եղեր... բայց, երբէք Ար-
դոս իրրեւ ոմն անգիտակ, չի կամե-
նում խոստովանիլ միանգամայն Հնչ,
կուսակեանքի գործի մօտակայ եւ Հե-
ռաւոր նպատակի էութեան: Իսկ զի նա
գրում է թէ զօրութեամբ՝ եւ այնպէս
խօսում է քիչ մը լրջութիւն, սակայն,
ո՛չ իսկ մասամբ դատողութիւն:

«Երիտասարդ» Հայաստան» ալ աննշան
գործ մը՝ Յաղթանակ հռչակելով... Ինչո՞ւ
այս իրողութիւնը առանց յապաղելու
հրապարակուել է ի գիտութիւն բոլոր
անախանձախնդիր հայերուն թէ ընկեր
Շանթը գովելի յատկութիւնը ունեցել
է, Պարսկաստանի նոր Ստորագումը
առ ինքն գրաւելու եւ որոշեալ դժուա-
րութեանց բարձումը փութացրել է, եւ
ընդ որում Յեղ. գաղափարի պրօպա-
կանը, Պարսկաստան շրջանում, աւելի
ազատ հոգեմանքը պիտի գտնէ այ-
սուհեանեւ:

Եւ ի փոխարէն այս գծուարա-յողթ
յաջողութեան՝ ըստ Արդոսի ոչինչ գո-
նահատում եւ ուրախութիւն չը պէտք
է, այլ ո՞չ եւ Մասամբ դատողութիւն:
Նոյնպէս, հայ Յեղ. կան անդրանիկ
ապարամբութեան առաջնորդող քաջա-
ղուն Մուրադը որ ամբողջ հայ ազգի
համակրանոց արժանացած է ցարդ, եւ
որոյն անկեղծութեան ու վստահու-
թեան մի փառաւոր ու ամուր սին մըն

կը յափշտակուէր ու էութիւնը կը
համակ ուէր այնպիսի՝ ճառագայթով
մը, որուն թափանցիկութիւնը կը ցնցէր
զինքը:

Ու կը մտածէ՛ր...
Միւսիւրման տէղիք մ'այս աստի-
ճան գութ ունենա՞ր կեանքներուն
վրայ:

Ասիկայ արտակարգ բան էր...
Հետեւաբար, չէր գիտեր թէ՛ ինչ
բանի վերագրէր անոր՝ գիտութիւնը.

դաւադրութեան թէ բարութեան...
Այսպէս, քանի մ'օր անցաւ...
Ծանփար պէկ ալ իր կամակամը վեր-
ցուց սրտէն: Տեղիքը բարութեան
մարմնացում մընէր իրեն համար. որ
թշուառութեան մը մէջ մը պատկերա-

ցնէր ինքզինքը:
— Եթէ ձեռքս եկածին չ'փ կեա-
վուր պաշտպանելու ըլլամ, ո՞վ բարի
ֆաբրի, հարցուց ծանփար պէկ խորին
զգուշութեամբ մը, ըսէ՛ք ինձի, մի՛ր ի՛նչ:

է զոր կը ներկայացէ հայ Յեղափո-
խութիւնը անմահ ժողովրդի անմահ
լի յիշատակով ու անզուգական անց-
նութիւնով իր անհրաժեշտ Մուրա-
տի որը Արդարի հայեցողութեամբ՝ աշխա-
րակալ մը չէ, ու Վա՛յն բերդը՝ Մեծն
Մուրադ ինքը չէ կարողացել զբաւել
այլ եւ թողել է Յեղափոխական ան-
կեղծ իրեն յաջորդներուն՝ ո՛չ թէ Ար-
դարեաններուն որ դեռ չունին մասամբ
դատողութիւնը:


Եւ թերեւս, գուցէ Արդար. զժգոհ
իւր քիչ մը լրջութիւն զիմակից՝ զոր
իր թանձր կծկանքի ունայն արատաւոր-
ութեամբ, յօգուած ի վերջով սեւացել է
երկտող եւս, իրեն մասունք բռնի ու-
րը եթէ անվայել՝ եւ աւելի անկիրթ
լինելով, ոչ միայն չեղուած է իրեն
լուրջ ուղղութիւնից՝ այլ եւ յաւակաւ
անուանարկութիւններն ազգային մը
բու բաւ չէ քիչ մը լրջութիւն, քան
մասամբ դատողութիւնը:

Ի զիմաց Ռոմ. Հնչ. Մ-գերի գործ. Յ
խմբին

Ատենադպիր Ատենապետ
Սուրէն Գուրգէն
(Կնիք)

Յ. Գ. Առաջին եւ վերջին անգամ ին-
նելով կը պատահանենք պաշտօնապէս,
անհատի մը:

ՀԱՆԻՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ



Ինչպէս արդէն յայտնի է Պոլիա-
րիոյ եւ Ռուսներու հայ հասարակու-
թեան՝ Սրբիւն երկար տարիներէ ի վեր
կը պահէ եկեղեցի մը եւ զպրոց մը:
Աս վերջինը բոլորովին զուրկ ըլլալով
ոեւէ եկամուտէ, կը խառնակարարուէր
եկեղեցական կալուածներու հասոյթո-
վը: Տարիներու ընթացքին մէջ այսպէս
չարունակուելով, եկեղեցին այժմ կը
գտնուի զբաւական մեծ պարտքի մը
առջեւ, եւ հետեւեալ բոլորովին ան-
կարող այլեւս վարժարանին օգնե-
լու:

Խորհուրդս տեսնելով որ անկարելի
է զպրոցը բաց պահել առանց եկեղե-
ցին իր պարտքերէն ազատելու, ձեռ-
նարկած է հանգանակութեան մը որուն
համար պատրաստած է նուիրատուներ
եւ որոնք ցրուելու զօրքը անձնուի-
րաբար յանձնուած է հոկտեմբեր 9էն
սկսած Տէր Վաղինակ հայր Տէր-Մի-
նասեանի վատմա ըլլալով որ մեր Պոլի-
կարահայ եւ Ռուսահայ եղբայրնե-
րը երբէք չպիտի զլանան իրենց նո-
ւէրները, քանի որ հանգանակութեան
զբաւը, ուղղակի Ազգային կրթական
զօրծին հետ առնչութիւն ունին:

Բոնքին առջեւը մեղապարտ մը կը հա-
մարուի մ...:

— Դու՞ք, գոչեց Աւագակապետը:
— Այո՞, ես:

— Ամենեւի՛ն... քանի որ ձեր խիղ-
ճը հանգարտ պիտի ըլլայ: Կրօնը բա-
րոյթեան, գթութեան ու վեհանձնու-
թեան արտայայտութիւնն է. անոր
հանդէպ մեղապարտ մը չ'էք, երբ կը
մարմնացնէք զայն ձեր հոգեւոյն մէջ:
Ինչ ըսելէ կեանքուրբ... ես չ'եմ հա-
կնար... ո՞վ իրաւունք տուած է մե-
զի Աստուծոյ ստեղծածներուն մէջ զա-
նազանութիւն գնել... ո՞վ է որ ու-
րիշի աչքերէն չիւղը հանել կուզէ,
բայց իր շաշտին գերանը չը տեսնուի:
Ո՛վ պէ՛կ, մարդուս զօրութիւնը բան
մը չ'է, երբ Աստուծոյ փութորիկ մը
հանձն անոր գէտ: Ո՛չ թէ ձեռքէդ ե
կածը մի՛ խնայէք թշուառ մը պաշտ-
պանելու համար, այլ աշխատեցէ՛ք
ձեր բոլոր անձնութիւնը դնելու

Վատան ըլլալով որ մեր սոյն բարի-
նպատակ ձեռնարկը պիտի քաջալեր-
ուի մեր ազգայիններու կողմէ, այժմ
չ'որհակալութիւն յայտնելով:

Մնամք խցրին յարգանք
Ի զիմաց թաղականութեան
Ատենադպիր Ատենապետ
Արտաշէս Հաճի Սարգիս Խ.
Փափազեան Բակլեան
(Կնիք)
5 հոկտ. 1906
Սրբիւն

ՂԱՍՏ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՍՈՒԵԼՈՑ



«Հոկտ» 15ին կիրակի երեկոյ ժամը
8 1/2ին «Սաէտինէնի» Սրահին մէջ,
«Սոխակ» նուագաթաղութիւնը կողմէ
պիտի ներկայացուի «Արեւնոտ հարսա-
նիք» կամ «Ասլան Ջարուհին» մեծ պա-
տրաստութեամբ եւ բոլորովին նոր
զգեստներով ի նպաստ Վասպուրականի
Սովետներուն:

Կը խնդրուի յարգոյ հայ հասարակու-
թեանն որ հաճի ներկայ ըլլալ ներկա-
յացման, մասնաորակապէս նպաստել Վա-
նի մեր զթաղապետ հայրենակիցնե-
րուն:

Կարգադիր Մանախումբ
Յ. Կ. Ծանկիւրեան
Ա Սարուխանեան
Ա. Մէլիստեան
9 հոկտեմբեր 1906
Վասնա

ՎԱՍՏԱՅԻ ՈՐԱՄԱՆԱՐԸ

Հայոց Որաւանամբ Ը. Բորոգ Ընդհ.
Ժողովը տեղի պիտի ունենայ յառաջի
կայ կիրակի 15 հոկտ կէս օրէն վերջ
ժամը ձիւճ երկուքին Ազգ. վարժա-
րանի սրահին մէջ:

Օրակարգ
ա. Գործ. Ժողովոյ համարատուութիւն
բ. Ընկերութեան արդի վիճակի մա-
սին խորհրդակցութիւն

Լիայոյս եւ թէ ընկերութեան ան-
գամներ ներկայ իբր հրաւիրագիր ըն-
դունելով պիտի բարեհաճին ներկայ
գտնուիլ: Ըստ արժանապատեան կա-
նոնադրի Ժողովին ներկայ գտնուող
անգամները մեծամասնութիւն պիտի
նկատուին եւ տրուած որոշումները
պիտի գործադրուին: Իսկ բացակայ ե-
ղող անգամներ վերջէն բողոքելու եւ

այդ վսեմ գաղափարին ներքեւ: Ան
որ հոգի մը կը փրկէ արեան ճապա-
ղիքներու մէջէն, կը վարձատրուի
անպատճառ:

— Չէ՞ որ կեանքը թշնամին է մեր
կրօնքին:

— Ատիկա անգիտակցութիւն մըն է
... եթէ մարդիկ կրօնքը միմիայն իր
բուն նշանակութեամբը հասկնային ու
անոր բարոյականը մարմնացնէին իրենց
հոգեւոյն մէջ, ան ատեն ատ տեսակ
տրամադրութիւն մը չ'ի պիտի տեղի
ունենար. բայց, ինչ ընենք որ տգի-
տութիւնը կայ, որուն մարմնացումն է
գաղափարական մարդը: Հաւատացէ՛ք
պէ՛կ, մարդիկ մեղապարտ են կրօնքին
բարոյականը եղծանելու մէջ:

— Չէ՞ որ մեր գիրքը կեանքը թշնամի
գէտ է:

— Երբէ՛ք. կրօնքի գիրքը կեանքու-
նեւոր գէտ չ'է. ատիկա մարդիկ հա-
րած են իրենց կիրքը յագեցնելու հա-

ղթողութիւն ընելու իրաւունք չ'պի-
տի ունենալ:

Մնամք յարգանք
Ի զիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Ջարպահանեան Յ. Կ. Ծանկիւրեան
(Կնիք)

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՇ ԶԸ ԳՈՐ

Թիֆլիս 30 հոկտ.

... Խմբագիր

Պ. Տիգրան Գալէմեան մասնաւոր
մամակաւ մը ինձ կը յայտնէ թէ ար-
դէն մի խումբ յարգարժան անձնաւո-
րութիւններէ կազմուած մի մարմին
Վասնայի մէջ իմ ունենալիք գործու-
նէութեան առթիւ կուզէ ցոյց տալ
իւր համակրութիւնը դէպ ինձ:

Այդ գեղեցիկ երեւոյթը անշուշտ
ինձ համար մեծ փայլ եւ յաջողու-
թիւն պիտի խոստանար: Ես ալ քիչ
խաբէն այդ քաղցր ընդունելութեան
զգացողութեամբ յարգելի պատճառներով
ներկայիս մէջ չի պիտի կարենամ խոս-
տումս կատարել, առ այժմ կը յե-
տաճգեմ իմ գաղափար եւ յուսով եմ
մի ուրիշ անգամ բաւարարութիւն
տալ յարգոյ հասարակութեան:

Յայտնելով իմ ամենաջերմ զգաց-
մունքներս գեղարուեստասէր եւ գոր-
ծօն երիտասարդութեան

Մնամ յարգանք
ՍԻՐԱՆՈՒՇ

ԻԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այրիացեալ քահանաներու
կրկնաժողովութեան խնդիրը
վերջնականապէս կարգադրելու
համար Ամենայն Հայոց Կաթողի-
կոսին հարցումին Պոլսոյ Կրօն. Ժո-
ղովը բացասական պատասխան տալ
որոշելով, պատասխանագրին պա-
տրաստութիւնը յանձնած է պատ-
րիարքին:

— Էջմիածնայ Սինողին անդամ
Տէր Նահապետ եպիսկոպոս, Նահապետ-
եան վախճաններ է: Հանգուցեալը
համալսարանական ուսում ըստա-
ցած, քաջ մանկավարժ, գրագէտ
եւ վարչական կարողութիւններով
օժտուած եկեղեցական մըն էր:

մար. որովհետեւ ան որ խիղճը կը
խղճէ իր մեղ, կիրքը տէրն է անոր:

— Ուրեմ, թուրք կառավարութիւնը
մեղապարտ է իր ոճիրներուն մէջ:

— Թուրք կառավարութիւնը
— իյո՛ւ:

— Գործուած ոճիրները թուրք կա-
ռավարութեան ձեռքով կատարուած
են:

— Ամեն ատեն:

— Պատճառը...

— Ո՛վ գիտէ. գոցէ՛ կը ջանայ բը-
նայինը ընել կեանքուրբ:

— Ատիկա դաւաճանութիւն մըն է
խղճի ու Աստուծոյ հանդէպ... Գար-
չելի բան է. պէ՛կ: Բայց կեանքին
ինչ բրած ունի կառավարութեան:

— Իրեն թէ ապստամբիլ կուզէ:

— Ապստամբիլ:

— Ծիշտ է:

— Դեռցէ՛ք, ով պէ՛կ, Ժողովուրդ
հանգարտ ու խաղաղ վիճակի մը

— Կարգաւոյժ ներսէս վրդ. Ը-
չըղլեանի, նոյնպէս կարգաւոյժ
Խորէն քհն. Մուրադեանի դի-
մումները՝ իրենց ներում շնոր-
հուելու համար՝ բացասական ար-
դիւնք տուին. որովհետեւ Կրօն.
Ժողովը իր վերջին նիստին որո-
շեց բացարձակապէս չընդունիլ
զանոնք միւս անգամ եւ այս առ-
թիւ վճռեց նոյն խոտութիւնը
ի գործ դնել բոլոր կարգաւոյժ-
ներու նկատմամբ:

— Եթովպիոյ նախկին հովիւ
Մկրտիչ վրդ. Ջլղատեան՝ Պոլսոյ
մէջ քանի մը ամիս առաջ կին
հերոսի մը հետ մենամարտ մը
ունեցած ու գլխէն վիւաւորուած
էր, Խառն Ժողովոյ որոշմամբ Պա-
յաղիտի առաջ. Տեղապահ կար-
գուցաւ:

— Ակնայ առաջ, Տեղապահ Տէր
Արտաւաղդ վրդ. հրաժարած ըլլա-
լով, Կրօն. Ժողովը որոշեց Ակնը
միացնել Արաբկիրի վիճակին:

— Կաթողիկոսական Նուիրակ
Տէր Տաճատ վարդապետի Սօֆիա
հասնելուն առթիւ, 1-2 պուլ-
կար թերթեր անոր պաշտօնի
մասին բաւական համակրանք
խօսիլ սկսած են:

Ս Ո Ւ Լ Թ Ա Ն Մ Ը Խ Ա Ս Թ Ա
Ս Ա Լ Թ Ա Ն Մ Ը

Պազը. էօյլէ ինտանդր քիմիէր
վարորդի, թէհամմուլ օլունմազ պիր
տիշ աղբընա միւլպիէլա օլունա
«չէք չըգար» տէյնէ աճը աճը լանթ-
լէր օքուր, օթուրիքի տիշնէ սիւրայթ
իթսէ, ջէնէ քէմիկէլիքին չիւրաւապ
գանկիւնատան տուտակարը տէօքիւլ-
սէ ինտա իտէր կիւնէ չէքտիւմէզ, օ՛
քէթիւ տիշնէ հաթըր իշին եւմէմէկ
վէ իշմէմէկլէ նէչէ պիր իլլէթ վէ աղ-
ընա գաթլանդալ երլար իլլէ թէրինէ
թէրինէ թէքմիլ պինայի վիճիւտին
խարապ էյլէր, էն՝ մը ինտարմ սաղ
օլուն տիշնէք, էօլլէր կիտէր:

Իշթէ պունուն կիպի «Սուլթան Հա-
միտ գայէթ աղըր խաթա իմիշ. էվրո-
բատան բէք չօք տօքթօրլար կէթիւթ-
տիւրիւմիշ վէ լաքին երնէ չիֆահապ
օլմամը, օնուն իշիւնպիլ ճի միլէ բիճալը
տէվլէթ էնտիշէ իշինտէ իմիշլէր տէ-

մէջ ատանկ մտածումներ չ'ունենար...
ըսելէ թէ կեանքը փճացած է անոր...
ըսելէ թէ անոր հագին մէջ արիւն
խառնուած է... արդեօք կը սխալմի:
— Չէ՛ք սխալիւք... կեանքը խա-
ղաղ կեանք մը չ'ունի մեր երկրին
մէջ. անիկա իր բարձր վրայ գլուխը
չը կրնար դնել... անասունի մը պէս
կաշխատի, բայց ձեռքը՝ պարապ ու
փորը՝ առթի կը նստի: Ծշմարտու-
թիւնն է որ կը խոստովանիմ, ոչ թէ
կեանքը ինքնուրու. մասին կողմակցու-
թիւն կընեմ...:

Աւագակապետը հառաչեց... միեւ-
նոյն ատեն չը կրցաւ իր աչքերու ար-
ցունքը զսպել, որոնք լեցունեցան իր
խոր խոր եղած ու խաճարած գոյն
մ'առած մօրուքին մէջ:

(Շարունակելի)

